

## ՄԱՍՍԻՄՈ ԼԻՊՊԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մասսիմո Լիպպին ծնվել է 1951թ.-ի հունվարի 14-ին, Իտալիայի Սիեննայի մերձակայքում գտնվող Պոնտե Տրեսսայում, որտեղ մինչ օրս ապրում և աշխատում է:

Սովորել է Սիեննայի արվեստի ինստիտուտում՝ արվեստագետներ Վիրջիլիո Կարմիգրիանին և Ալբերտ Լասսուերին:

Ինստիտուտն ավարտել է Ջուլիանո Բրիգանտիի հետ, որը քանդակագործ Ալբերտո Սաննիի աշակերտն էր:

Ամուսնացած է, ունի 4 երեխա:

Մ. Լիպպին մոտ 10 տարի դասախոսել է Սիեննայի արվեստի ինստիտուտում, Կարրայի և Մաչերատայի ակադեմիաներում: Թողնելով դասավանդելը, ամբողջովին նվիրվել է գեղարվեստական գործունեությանը, հանդես գալով սեփական մոնումենտալ գործերով Իտալիայում, Եվրոպայում և ԱՄՆ-ում:

Աշխատանքի և ուսման բերումով ցուցահանդեսներ է կազմակերպել՝ ներկայացնելով Իտալիան, ճանապարհորդել է Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Չինաստանում, ինչպես նաև Հայաստանում, Արցախում:

1982թ.-ին «Իտալիայի նոր պոետները» ժողովածուի մեջ լույս է տեսնել նրա պոեզիայի առաջին հավաքածուն, որի նախաբանը գրել է Ալֆոնսո Բերարդինելլին:

2004թ. մարտին նա դասախոսությունների է հրավիրվել ԱՄՆ-ի Դալլասի և Տեխասի համալսարաններ:

Մասսիմո Լիպպին առաջին անգամ հանդես է եկել նաև որպես դրամատուրգ և ռեժիսոր, հոգևոր ներկայացումներ բեմադրելով Սիեննայի, Մոնտերեգիոնիի Մարֆա և Մարիա եկեղեցիներում:

2006թ.-ին, Վերոնայի 4-րդ կոնգրեսում Մասսիմո Լիպպին ներկայացրել է հսկայական քարե քանդակ:

Նրա հզորագույն աշխատանքների շարքին են պատկանում Դոնատոյի Մոնտեռոնիի, Մոնտեկատինի Քրիստոս Փրկիչի և վերջերս էլ Վիկտորիա Ռագուզայի Ս.Դոմինիկ Սավիոյի եկեղեցիներում կանգնեցրած բրոնե պորտալները, Ֆորտե Մարմիի Աշխարհը արթնացնող Աքլորի հուշարձանը և Ս.Բերնարդո Տոլմեի մարմարե արձանը Օլիվետո Մարջոյում, ինչպես նաև մի շարք այլ ստեղծագործություններ: